



ԴՐ. ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

**ԵՐԿՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԹԱԳԱԻՈՐՆԵՐ Ի ՀԱՅԱՍՏԱՆ
ԳԱԳԻԿ ԱՐԾՐՈՒՆԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԵՒ
ԳԱԳԻԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԱՆԻԻ
Անտեսուած էջեր հայկական Երկախօսութեան
ընդ Բիզանդիոնի**

Գագիկ Արծրունի եւ Գագիկ Բագրատունի թագաւորներու հաւատոյ գիրերը՝ Հայ Մատենագրութեան արժեքաւոր նշխարներ են, որոնք շահեկանութիւն կը ներկայացնեն թէ միջ-եկեղեցական եւ թէ քաղաքական տեսակէտէ: Գագիկ Արծրունի (879—2. 943) հիմնադիրն է Վասպուրականի հայկական տեղական թագաւորութեան (908) եւ կառուցողը Աղթամարի ս. Խաչ եկեղեցւոյ (915—921 22), որ ամէնէն գեղեցիկ եւ նշանակալից յուշարձաններէն մին կը հանդիսանայ Հայաստան աշխարհի: Յամենայն դէպս իր աստուածաբանական հմտութեան եւ եկեղեցական նախաձեռնութեանց մասին դուրանքեայ տեղեկութիւններ կը գտնենք հայագիտական գրականութեան մէջ: 927 թուին Յովհաննէս Ե. Դրասխանակերտցի կաթողիկոս (897—929) ընդհանրական հայրապետութեան Աթոռը Անիէն եւ Չորավանքէն փոխադրեց Աղթամար, ուր բնակեցան եւ գործեցին իր երեք յաջորդները՝ մինչեւ 946: Կամ այս առթիւ եւ կամ Ստեփանոս Ռշտունի (929—930) կամ Թեոդորոս Ռշտունի (930—941) կաթողիկոսներու ընտրութեան առնչութեամբ՝ Գագիկ Արծրունի գրած է երկախօսութեան եւ հաշտութեան աստուածաբանական նամակ մը Ռոմանոս Լեկապենոս (920—944) կայսեր եւ Բիւզանդական Եկեղեցւոյ ժամանակակից պետին, որ մեծագոյն, հաւանականութեամբ Տրիփոն Պատրիարքը (Դեկտ. 927—օգոստոս 931)

պիտի ըլլայ: Օրմանեան՝ կը թելադրէ շուրջ 930—31 տարին որպէս Գագիկի թուրքի գրութեան թուական, երբ Յովհաննէս եւ Թէոփիլոս Գուրգուաս զօրավարները յաղթական յարձակումներ կը գործէին Հայաստանի՝ մահմեդականաց կողմէ գրաւեալ քաղաքներուն վրայ—Դուին, Մելիտենէ, Սամսատ, Խլաթ, Էրպրում եւն: Արդարեւ Իբն ալ-Ասիր 319/931—32 թուականի ներքոյ կը հաղորդէ թէ Իբն ալ-Դայրանի Գագիկ Արծրունի եւ այլ հայազգի իշխաններ գրեցին Բիւզանդացւոց՝ որպէսզի յարձակին մահմեդականաց վրայ եւ այս առնչութեամբ խոստացան իրենց օժանդակութիւնը:—

«Այդ տարին Իբն ալ-Դայրանին եւ Հայաստանի ծայրամասային գաւառներու այլ հայազգի իշխաններ գրեցին Հռոմէներուն, որդելով յարձակիլ Իսլամի երկրին վրայ եւ խոստանալով իրենց օգնութիւնը: Հռոմէները մեծ բազմութեամբ յարձակեցան, աւերեցին Բերկրին, Խլաթը իր շրջակայքով, մահմեդականներէն շատերուն սպաննեցին եւ մեծ բազմութիւն գերեցին» եւն²:

Արաբ պատմիչին հաղորդած տոյն տեղեկութեան հիման վրայ՝ Վարդանեան եւս Գագիկ Թագաւորի նամակը առ Կապրոն Յունաց՝ գրեալ կը համարէ 931 թուին³: Յիբրաի սակայն Դոմեստիկոս Յովհաննէս Գուրգու-

աս, իր եղբայրը եւ Հայոց Մեկիք Մեկիաս արդէն 926 Յունիսիսն ձեռնարկած էին Մեփոսեեի վրայ յաջող յարձակման, եւ խաջորդ տարին՝ երբ Բիւզանդիոն Բուլգարիոյ հետ խաղաղութեան դաշինք կնքեց, Կայսրը իր ոյժերը կենտրոնացուց արեւելեան սահմաններու վրայ: Այդ պատճառաւ Ռանսիման՝, հետեւելով Չամչեանի⁵, Արծրունի Թագաւորին աստուածաբանական թուղթը կը նշանակէ 926—27 թուին: Սոյն պարագային Կ. Պոլսոյ Պատրիարքը կը հանդիսանայ Ստեփանոս Բ. (Յու. 925—3թ. 927)⁶:

Գագիկ Արքայ իր նամակը ուղղեալ է «առտուրք եւ քրիստոսապաւեալ թագաւորն» Ռոմանոս եւ «սուրբ եւ բարձրագահ արքեպիսկոպոսիդ եւ առաքեւածառանգ Պատրիարքիդ» եւ կը հաստատէ թէ «բնաբար ունեւք աշխարհս Հայոց զինպանդութիւն կայսերական Աթոռոյդ եւ հայրապետական գահակալութեանդ»⁷: Նա իր լաւատեսութեան եւ բարի կամեցողութեան մէջ խանդավառուելով՝ մինչեւ իսկ կը յայտարարէ. «Չի ոչ միայն սիրողաբար հարկս հարկանեւք Կայսեր, այլեւ առ սուրբ հաւատոյն միաւորութիւն խոստովանութեան հաղորդս եւ հաւասարս գտանեւք»⁸: Յետագայ տողերէն յստակօրէն կը յայտնուի՝ թէ Արծրունի ի մտի ունէր եկեղեցական պատմութեան նախա-քաղկեդոնական ժամանակաշրջանը: Դրուատելէ ետք առաջին երեք Տիեզերական Ժողովները՝ Նիկիոյ 325, Կ. Պոլսոյ 381 եւ Եփեսոսի 431, նա «առաջնորդ վարդապետներու» հաղորդած տեղեկութեանց եւ փաստարկութեանց հիման վրայ՝ Քաղկեդոնի վարդապետութիւնը կը բացատրէ որպէս նեստորական իմացութիւն: «Նեստորաբար իմացմամբ սահման եղեալ լեռ անձառ միաւորութեան Բանին եւ մարմնոյն՝ երկու բնութիւնս բաժանաբար ի մի Տէր Յիսուս Քրիստոս խոստովանեցին» կը գրէ եւ կը շարունակէ. «Եւ երկուս կամս եւ երկուս ներգործութիւնս, եւ զնաչն եւ զմահն մարդոյն միայնոյ սահմանեցին, եւ ոչ Աստուծոյ մարդ եղելոյ ի սուրբ Կուսէն Աստուածածնէ, զոր ոչ աւանդեաց մեզ Լուսաւորիչն մեր սուրբ Գրիգոր հանդերձ այլաւք վարդապետաւք»⁹: Հետաքրքրականօրէն՝ թեպէտ Գրիգոր Լուսաւորչի ժամանակ քրիստոսաբանական խօսակցութիւններն ու վիճաբանութիւնները Ե. դարու նկարագիրն ու աստուծութիւնը չունէին, այնուհանդերձ նա կը փշուի որպէս Հայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութեան մեծագոյն հեղինակութիւնը. 325 թուին, երբ Ա. Տիեզերական Ժողովը պիտի գումարուէր ընդդէմ Արիոսի, Գրիգոր Պարթեւ իր վերջին օրերը կ'ապրէր եւ այդ պատճառաւ կրօններ որդին Արիստակէսը ուղարկեց Նիկիա:

Անշուշտ Հայ եւ Բիւզանդական Եկեղեցի-

ներու ծանրագոյն տարբերութիւնը Քրիստոսի բնութեանց եւ կամ Քաղկեդոնի Ժողովի հարցն էր: Այդ պատճառաւ Գագիկ ընդարձակօրէն կը բացատրէ Հայ Եկեղեցւոյ տեսակետը եւ եկեղեցական հայերէր պիտառութիւններով կը հիմնաւորէ ու կը ձոխացնէ իր պաշտպանողականը: Քաղկեդոնական վարդապետութեան յարակցումը նեստորական ուսուցման հետ՝ դժբախտ պարագայ մըն էր եւ բնականօրէն անհաճոյ Բիւզանդիոնի Կայսեր եւ աստուածաբաններուն: Բայց Վասպուրականի Թագաւորին նպատակը անկասկած Բիւզանդացիները զրգոյել կամ զայրացնել չէր, այլ ընդհակառակը՝ հաշտութեան եւ համերաշխութեան միջոց մը գտնել: Մեկտուս կամ Մեկիսիոս Անտիքացւոյ բանաձեւումով, որ առաջին անգամ այս նամակի մէջ կը յայտնուի, Գագիկ կը յուսայ յաջողութիւն գտնել: «Մի բնութիւն խոստովանիմք եւ երկու գոյացութիւն»¹⁰ կ'ըսէ Անտիքի եպիսկոպոսը, որ 381 թուի Կ. Պոլսոյ Տիեզերական Ժողովի նախապառաւորութեան մէջ կարեւոր դեր խաղացած էր¹¹: «Մի բնութիւն» (μία φύσις) բանաձեւումով՝ Հայք կը խոստովանէին Կիւրեղ Ա. դեքսանդրոցւոյ «Մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ» ուղղափառ վարդապետութիւնը եւ երկու գոյացութիւն (δύο φύσεις) բացատրութեամբ կը փարատէին Միաբնակներուն վերագրեալ «բնութիւն-գոյացութիւն» շփոթութիւնը: Պարզորոշ է թէ Հայ Եկեղեցին «մի բնութիւն» խօսքով կ'արտայայտէր եւ կ'արտայայտէ ոչ թէ միակ բնութիւն ի Քրիստոս, այլ աստուածային եւ մարդկային բնութեանց հրաշալի միաւորութիւնը: Այս տեսակէտէն, Ը. դարուն արդէն Հայոց անուանի իմաստասէրն ու աստուածաբանը՝ Յովնանէս Օձնեցի, կը փորձէր տարակարծութիւնները հարթել՝ «է ըստ բնութեան յերկուց՝ աստուածային եւ մարդկային, իսկ ըստ միաւորութեան՝ մի» բանաձեւումով եւ Բարսեղ Կեսարացւոյ վկայակոչմամբ կ'ընդգծէր՝ «Երկուց գոյացութեանց կատարելոց միաւորութիւն»¹²:

Քաղկեդոնի հարցէն զատ՝ Հայ եւ Բիւզանդական Եկեղեցիներու կարեւորագոյն տարբերութիւնը Երրորդութեան փառաբանութեան նուիրեալ «Սուրբ Աստուած» երգի «որ խաչեցար վասն մեր» յաւելումի պարագան էր: Սոյն բանաձեւի հեղինակն կը նկատուի Պետրոս Կնափէոս Թափիչ Անտիոքացի, ծագումով Քաղկեդոնէն (+488): Հարցը ըստ ինքեան պարզ է, բայց Միջին Դարուն պատճառ հանդիսացած կրքոտ վիճաբանութիւններու: Ասորիքի, Եգիպտոսի եւ Հայաստանի աստուածաբանները կը պնդէին թէ «որ խաչեցար» խօսքը կը վերաբերի միայն Քրիստոսի, մինչդեռ Բիւզան-

դաճիք աղանդաւորական վտանգ մը կը տեսնէին՝ խորհելով որ գուցէ ուրանք խաչելութիւնը ընդհանրապէս Երրորդութեան հետ աղընչէին եւ կամ աստուածային բնութիւնը եւս խաչեալ իմանային: Կարելի է անվարան հաստատել, որ այս հարցը շարունակութունն էր Քաղկեդոնի կամ բնութեանց վեճերուն: Եթէ երկու կողմերը կարենային փոխադարձաբար որոշ հանդուրժողութիւն եւ հասկացողութիւն ցուցաբերել, վատահօրէն ընդհանրական եկեղեցւոյ կը խնայուէին ցաւալի կազ ու կոիւներ: Յամենայն դէպս Գազիկ Արծրունի իր տեղեկութիւնները քաղելով հեղինակաւոր վարդապետներէ, ընդարձակօրէն կը լուսաբանէ «որ խաչեցար» ի իմաստը եւ հետեւեալ բացատրութիւնը կ'արձանագրէ. «Քաւ մի լիցի. ոչ Երրորդութեանն պիտառարանութիւնս պայս վերաձայնեմք, այլ Որդւոյ միայնոյ. որպէս անարդանայն ի Կուսէն՝ Որդւոյ միայնոյ հաւատաւք, այսպէս պիտաչն եւ անհն Որդւոյ խոստովանիմք»: Առ այս նամակագիրը կը պիտառէ Սոկրատի եկեղեցական Պատմութեան վկայութիւն մը՝ ըստ որում Յովհան Ոսկերցուն (շ. 344 45—407) Արիոսականներու դէմ պայքարի ընթացքին, հրահանգած էր գիշերային պաշտամունքի ժամանակ Երրորդութիւնը փառաբանել առանց «որ խաչեցար» ի, իսկ առաւօտեան ժամերգութեան մէջ Երեքորբեանը «Որդւոյ ընծայեցուցանել»¹³: Արծրունի կը յիշէ նաեւ Սոկրատայ միւս վկայութիւնը՝ թէ Իգնատիոս Անտիոքացի (Ա—Բ. դար) առաջինն էր, որ կարգադրեց «յերեկոյս եւ ի վաղորդեան»՝ պաշտամունքի ժամուն Երեքորբեանը ի վերայ Որդւոյ երգել¹⁴: Սոյն տեղեկութիւնները Գազիկ քահանայն էր Սոկրատի Պատմութեան հայերէն իմբագրութենէն կամ այսպէս կոչուած «Փոքր Սոկրատ»էն, որովհետեւ թուն Սոկրատի Պատմութեան մէջ նման հաղորդումներ չըկան: Հետեւաբար, կ'ենթադրեմ Բիւզանդիոնի Կայսրը, Կ. Պոլսոյ Պատրիարքը եւ այլ աստուածաբաններ՝ պարմացած պիտի ըլլան Հայոց այս մեկնաբանութեան վերայ:

Վասպուրականի Թագաւորը իր թուղթին մէջ աստուածաբանական եւ աղբիւրագիտական խոր հմտութիւն կը ցուցաբերէ: Թէպէտ նա քանիցս կը նշէ թէ «հարցի յառաջնորդաց մերոց» կամ «հարցի դարձեալ վարդապետացս մեր», բայց անկասկած իր գրական արդիւնքն է երկայնութեան այս փաստաթուղթը: Նա յայտնապէս ի ձեռնին ունեցած է «Կնիք Հաւատոյ» եւ «Գիրք Թղթոց» հաւաքածոները, ինչպէս եւ Տիմոթէոս Կուպի «Հակաճառութիւն»ը եւ Գրիգոր Լուսաւորչի «Վարդապետութիւն»ը՝ Ագաթանգեղոսի գրող մէջ: Ուղղակի եւ կամ անուղղակի այս եւ նման ժողովածուներու միջոցաւ օգտա-

գործեր է Իրենէոս Լուգդոնացւոյ (Բ. դար), Աթանաս Աղեքսանդրացւոյ (Դ. դար), Մեթիոփոս Անտիոքացւոյ (Դ. դար), Կիւրել Երուսաղիմացւոյ (Դ. դար), Գրիգոր Մքանչեղագործի (Գ. դար) եւ Գրիգոր Նազիանզացի Աստուածաբանի (Դ. դար) գրութիւնները եւ քաղուածաբար կամ բառացի վկայակոչումներ կատարած: Նամակի վերջաւորութեան Արծրունի համառօտ պատմութիւնը կը գրէ Քաղկեդոնի Ժողովին աղընչակից պայքարներու, կը շեշտէ թէ Աղեքսանդրիոյ, Երուսաղեմի, Անտիոքի, Կ. Պոլսոյ եւ Հռովմի աստուածաբաններէն եւ Բիւզանդիոնի Կայսրերէն ոմանք բուն ընդդիմութիւն ցոյց տուին Դ. Տիեզերական Ժողովի որոշումներուն դէմ եւ կը յիշէ թէ ինչպէս Բաբգէն Ոթմեցի կաթողիկոսի (490—516) օրով՝ Դուինի 508 թուի Համագումարին, Հայոց եւ Վրացիք գլխաւորութեամբ Գաբրիէլ Կաթողիկոսի¹⁵ «ընդդէմ Ժողովոյն միախորհ եղին ընդդիմակա»¹⁶: Դժբախտաբար ռեւէ տեղեկութիւն չունինք այն վարդապետներու կամ առաջնորդներու մասին՝ որոնք աղբիւրներ կամ փաստաթուղթեր հայթայթած են Արծրունեաց Թագաւորին: Եթէ նամակը իսկապէս 926/27 թուին գրուած է, այդ պարագային կարելի է ենթադրել թէ Յովհան Դրասխանակերտցի (897—929), որ ճիշտ այդ տարին քաղաքական ապահովութեան պատճառաւ հայրապետական Աթոռը Աղթամար փոխադրեց՝ անպայման օժանդակած պիտի ըլլայ: Նաեւ Յովհաննէսի յաջորդները, Թեոդորոս Ռշտունի եւ Եղիշէ Ռշտունի, որպէս եպիսկոպոս կամ կաթողիկոս՝ կրնան օգտակար հանդիսացած լինել: Հաւանաբար երկու Անանիաները եւս, որոնք կարեւոր մտաւորական անձնավորութիւններ էին, քաջալերուած են Արծրունին—Անանիա Սոկացի կաթողիկոս (946—968) եւ Անանիա Նարեկացի՝ հիմնադիր ու առաջնորդ Նարեկայ Վանուց եւ Դպրոցի եւ հեղինակ հակաքաղկեդոնական «Հաւատարմատ» աշխատութեան: Գազիկ իր նամակը կ'աւարտէ կոչով մը՝ վերացնելու տարբերութիւնը կամ միջնորդը եւ երկու կողմերը միաւորելու հաշտութեան նոր բանաձեւի մը մէջ. «Եթէ իցէ՛ արդեւք հնարաւոր, ի բաց բառնալ ակրճիմն՝ որ կայ ի միջի, ըստ Առաքելոյն Պաւղոսի, պզանկն քակել եւ Կմիջնորմն յատակել, եւ յերկուսինն հաստատել ի մի նոր մարդ, յոր կոչեցաք ծննդեամբ սուրբ աւապանին»¹⁷:

Հայոց Վարդապետները Գազիկի Թուղթը այնքան կարեւոր նկատեցին՝ որ պայն առած են **Գիրք Թղթոց** ժողովածուին մէջ: Գործնական տեսակէտէ՝ անշուշտ նամակը չէր կարող իրականացնել եկեղեցական միութիւնը, որովհետեւ դժբախտաբար միջնորդը շատ Կորսուր էր եւ «Քաղկեդոնը մի-

ռանալ հեշտ չէր»¹⁸։ Յամենայն դեպս, չի կրնար առ այդ կասկած լինել, որ Արծրունեաց Թագաւորը իր աստուածաբանական թուրքով յաջողեցաւ շահիլ Ռոմանոս Կայսեր համակրութիւնը եւ ապահովել անոր քաջալերութիւնը՝ ի նպաստ Վասպուրականի դիրքի հպօրացման¹⁹։

Ժ—ԺԱ դարու հայ-բիւզանդական քաղաքական-եկեղեցական երկախօսութեան շահեկան վաւերաթուղթերէն մին եւս՝ Գագիկ Բ. Բագրատունի (շ. 1024—1079, թագաւոր 1042—1045)՝ հաւատոյ գիրն է՝ ուղղեալ Կոստանդին Դուկաս կայսեր։ Ըստ Մատթոս Ուռեայեցւոյ՝ 1065 թուին Սանահնի միաբաններէն Յակոբոս վարդապետ Քարափնեցի որպէս աստուածաբան եւ պատգամաւոր՝ Արուսեակ եւ Ատոմ Արծրունի արքայորդւոց հետ Կ. Պոլիս գացած էր մասնակցելու միաբարական խօսակցութեանց։ Գովասանական արտայայտութիւններէ, բարեկամական պզգոյսներէ եւ կամ առատ նուէրներէ շլանալով՝ նա Հոռոմոց կողմը դարձաւ եւ անպիսի վարդապետական թուրք մը գրեց՝ որ Բիւզանդացւոց Կայսրը խորապէս գոհ մնաց։ Դժբախտաբար Քարափնեցւոյ նամակը մեն չէ հասած՝ որ կարենաինք արդար դատաստան մը կատարել։ Բայց քանի Կոստանդին Կայսր հաւատոյ գիրը իր կարեւոր վկայաթուղթ հրամայած է ս. Ստփիոյ դիւանատան մէջ ի պահ դնել, այդ կը նշանակէ հեղինակը պիտոյական տեսութիւններ եւ մեկնաբանութիւններ գրած էր։ Ճիշդ այդ օրերուն «իբրեւ վարժիւ թուրքեայ հասանէր Գագիկ ի Կոստանդինուպօլիս» եւ տեղեկանալով Յակոբոս Վարդապետի գրութեան բովանդակութեան՝ «պատառեաց զնա առաջի թագաւորին լերկուս ծուէն եւ ընկէց զնա լերկիր»²⁰։ Թատրերգական այս տեսքանին՝ ակնկալելի էր որ հետեւէր Կայսեր վարդապին պտօթկումը, բայց հետաքրքրականօրէն գասման փոխարէն՝ «Թագաւորն տեսեալ՝ ամաչեաց յոյժ»²¹։ Անշուշտ արագ ընթերցման կամ շփոթութեան արդիւնք է Հրաչեայ Աճառեանի վերարտադրութիւնը՝ որպէս թէ Գագիկ յատարարած ըլլայ. «Աղայիսի վարդապետներ հարիւրներով կան Հայաստանում, իսկ թագաւորը մի հաստ է»²²։ Յիրաւի ըստ Ուռեայեցւոյ՝ Թագաւորը պատասխանած է. «Ահա սա այդ կրօնաւոր է, եւ ապաիսի բազումք կան յաշխարհն Հայոց, որք ոչ ընդունին, եւ ոչ որ հնապանդի գրոյ սորա, եւ մեք ընդ կատարեալ վարդապետսն Հայոց ոչ ունինք զսա»։ «Ապա Բագրատունեաց վերջին եւ դժբախտ Թագաւորը ինք անձաւք կը գրէ հաւատոյ թուրք մը»²³ եւ զայն կը յանձնէ Կոստանդին Կայսեր եւ Յովհաննէս Ը. Պատրիարքին (1064—75)։

Գագիկ Բագրատունւոյ հաւատոյ գիրը՝ համեմատութեամբ Գագիկ Արծրունիի վարդապետական թուրքին՝ կը բովանդակէ աւելի նիւթեր—ոչ միայն երկու բնութեանց հարցը եւ Երեքսրբեանի վէճը, այլեւ Երրորդութեան դաւանութիւնը եւ ծիսական-տոմարական խնդիրներ։ Գրութեան սկիզբը՝ հեղինակը կը խօսի Արարչութեան եւ Երրորդութեան մասին, կը շեշտէ Հօր, Որդիին եւ ս. Հոգւոյն համահաւասար եւ փառաւորակից լինելը եւ կ'եզրակացնէ. «Երիս անձնաւորութիւն եւ կամք մի, կամ հաճութեան, կամ տէրութեան, մի ուստեք ի նոսա երիցութիւնք կամ կրօնեցութիւնք»²⁴։ Հայոց դաւանութեան մասին ամեն թիրիմացութիւն փարատելու մտօք՝ Գագիկ կը լիջէ եւ կը նշուի գլխաւոր հերձուածողներն ու աղանդաւորները. Վաղեստիսոս (Բ. դար), Մարկիոն (մեռ. շ. 160 թ.), Սուռանոս (շ. 150), Մանի (մեռ. 277), Սովատիանոս (շ. 250), Սաբելիոս (շ. 260), Արիոս (մեռ. 336 թ.), Փոտիոս (Դ. դար), Նեստոր Պատրիարք Կ. Պոլսոյ (մեռ. շ. 451), Եւսիբէս (դատաւարտեալ 451 թուին ի Ժողովոյն Քաղկեդոնի), Սարգիս հայ աղանդաւոր, Պօղոս Սամատացի (Եպիսկոպոս Անտիոքի 260—270), Պետրոս Կնափէոս (Պատրիարք Անտիոքայ 471—488) եւ Դիոսկորոս Դէոսկորոս Աղեքսանդրացի (Պատրիարք Աղեքսանդրիոյ 444—451, վիճ. 454)։ Պետրոս Կնափէոսի կամ Թափիչի դատաւարտութիւնը՝ վատաօրէն արդիւնք է թիրիմացութեան։ Նա հեղինակն է Երեքսրբեանի «որ խաչեցաւ վան մեր» յաւելումի, հայ աստուածաբանական գրականութեան մէջ միշտ որպէս ուղղափառ եւ յարգարժան անձ մը կը նկատուի²⁵, եւ մինչեւ իսկ Ստեփանոս Սիւնեցւոյ թուրքին մէջ «սուրք» կ'անուանուի²⁶։ Դիոսկորոս Արեւախակոպոս, շեղմ պաշտպան «Մի է բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ» բանաձեւին եւ դաւանութեան եւ յաջորդ Կիւրեղ Պատրիարքի՝ Աղեքսանդրիոյ Աթոռին վրայ՝ 444 թուին, նմանապէս Հայ Եկեղեցւոյ կողմանէ իր ուղղափառ վարդապետութեան ախտեան կը ճանչցուի²⁷ եւ «երանելի»²⁸ ու «մեծ»²⁹ մակղիւններով պատուրած է։ Վասպուրականի Գագիկ Արծրունի թագաւորի թուրքին մէջ եւս, նա կը լիջուի որպէս ընդդիմացիր Քաղկեդոնի Ժողովի³⁰։ Թէպէտ Օրմանեան կ'եզրակացնէ՝ «որով կը ճշդուի Հայոց դաւանութեան Կիւրեղի եւ ոչ Դէոսկորոսի դրութեան վրայ հաստատուած ըլլալը»³¹, բայց ինչպիսի Գագիկ Բագրատունի դիւանագիտական դարձումով մը կը շանայ հաճոյ թուի Բիւզանդացւոց. «Սոյնպէս եւ Կ'Դէոսկորոսն՝ եթէ խորհեցաւ յալալիսի ինչ հերձուածս, եւ եղիցի նպովեայ ըստ ձեռն աւելաբանու-

թեան խօսիցդ»³²: Հերձուածողաց եւ աղանդաւորաց նպովին կը հետեւի Մարդեղութեան եւ խաչելութեան, փնչպէս եւ Մարիամու աստուածամայրութեան հարցերու համատեղ պաշտպանողական բացատրութիւնը: Առ այս նամակագիրը իր տեսութիւնը կ'օրացնելու մտօք՝ Գրիգոր Սքանչելագործէն կը պիտառէ «մի բնութիւն խոստովանելի է յետ միաւորութեան՝ կարողակից արարեալ լմարմին հողեղէն՝ Աստուածութեանն»³³ խօսքը եւ Գրիգոր Նիսացիէն յառաջ կը բերէ հետեւեալ վկայութիւնը. «Նոր փմն է յեղանակս այս խառնական եւ միաւորութեան եւ խառնի եւ մնայ յամենայնի ամենայնի՝ անխառն եւ անջփոթ եւ անապական եւ անփոխադրելի»³⁴: Երեքսրբենի «որ խաչեցար վասն մեր» երգասացութիւնը՝ հեղինակը կը պաշտպանէ որպէս Որդւոյն ուղղեալ փառաբանութիւն եւ կը յաւելու. — եթէ ոեւէ մէկը Հօր եւ Հոգւոյն վրայ եւս լինանայ՝ «դատախալ գտցի երից Աստուածութեանն»³⁵: Անապակ բաժակի եւ անխառն հացի սովորութիւնը նա կը հասկանայ եւ կը ջատագովէ ոչ իբր տարբեր աւանդութիւն՝ այլ որպէս արտայայտութիւն Յիսուսի մարմնառութեան եւ երկու բնութեանց անբաժանելի ու անխառն միաւորութեան. «Իսկ մեք Աստուծոյ միայն երկիրպագանեմք եւ խոստովանեմք. եւ անբաժանելի խառնումն վստուածութեանն եւ քնարմոյն հաւանիմք, քի մի եւ մարմնոյն երկրպագելով՝ եւ չորրորդութիւն ի ներքս անցուք փոխանակ Երրորդութեանն, եւ կամ մահուամբ մարդոյն միայն փրկեալ արեամբ՝ եւ ոչ աստուածայնովն»³⁶: Հաւատոյ թուղթի շարունակութեան մէջ՝ Գագիկ Բագրատունի կը բացատրէ եւ կը ճշդէ Եղիաբեթի յղութեան (9 Հոկտեմբեր), Մարիամու Աւետման (7 Ապրիլ) եւ Քրիստոսի ծննդեան ու մկրտութեան (6 Յունուար) թուականները՝ համաձայն Հայոց տոմարական հաշուարկութեան: Վերջին հարցը Առաջաւորի կամ Առաջաւորաց պահոց եւ այս առընչութեամբ՝ Սարգսի տօնի վէճն է: Մեծ Պահոց Բուն Բարեկենդանէն երեք եւ Չատկէն տասը շաբաթ առաջ հանդիպող Կիրակին՝ Հայ Եկեղեցւոյ մէջ կը կոչուի «Առաջաւորաց Կիրակի» եւ անոր յաջորդող հինգ օրերը ծանօթ են «Առաջաւորաց պահք» անունով՝ որպէս Գրիգոր Լուսաւորչէն հաստատուած առաջին պահք: Պահոց Ե. կամ Ուրբաթ օրը կը յիշատակուի Յովնանու քարոզչութիւնը եւ կամ Նինուէի ապաշխարութիւնը, իսկ Չ. կամ Շաբաթ օրը՝ կը նշուի Սարգիս Զօրավարի տօնը: Բիւզանդացիք «Առաջաւորաց Պահք» չունին եւ Հայոց ս. Սարգիսը կ'անարգեն եւ առասպելախառն պատմութիւններու կը հաւատան: Յիրաւի Սարգիս անդաւն մէջ ամփոփուած են տարբեր անձնաւորութիւններ եւ վիպական կրօններ եւ ժողովրդական աւանդութիւններ: Յիշատակելի են՝ Սարգիս Զօրավար (Դ. դար), Սարգիս Ճգնատոր Դուխի (Է—Ը. դար), Սարգիս Իշխան, որ յոյն աղօթիկ մը առեւանգած է³⁷: Գագիկ կը պնդէ թէ Հայոց Սարգիսը «ստրատելատ» կամ Զօրավար էր «յաւուրս Թեոդոսի Թագաւորին», որ եւ Բագրեւանդ գաւառի մէջ իբր ճշմարիտ մարտիրոս նահատակուեցաւ «յորդանցն Հագարու»: Արեւելեան-հռոմէական կամ Բիւզանդական Կայսրութեան պատմութեան մէջ ծանօթ են երեք Թեոդոսներ.

1. Թեոդոսիոս Ա. յԱրեւել (379—395).

2. Թեոդոսիոս Բ. յԱրեւել (408—450).

3. Թեոդոսիոս Գ. (715—716):

Հագար կամ Հագարացի անունը ընդհանրապէս Արաբաց եւ մասնաւորաբար Իսլամականաց հետ կ'առնուի, բայց կրնայ նաեւ Պարսից համար գործածուած լինել: Բագրատունւոյ տունականը եթէ տառացիօրէն ըմբռնենք, այդ պարագային Սարգիս Ստրատելատ վկայուած է Ը. դարու սկիզբը: Բայց ինձ առաւել հաւանական եւ վստահական կը թուի Ներսէս Շնորհալոյ բացատրութիւնը՝ ըստ որում Սարգիս քաջամարտիկ ու բարեպաշտ իշխան մըն էր Կապադովքիայէն, Կատանդիանոս Մեծի շրջանին (306—324): 361 թուին երբ անօրէն Յուլիանոս բռնութեամբ տիրացաւ կայսերական գահին, Սարգիս եւ իր որդին փախան Պարսկաստան եւ անդ Շապուհ Արքայի հրամանով զփստուեցան՝ հաստատ ու անարատ պահելով իրենց քրիստոնէական հաւատը³⁸: Այս Սարգիսն է որ իր որդւոյն Մարտիրոսի հետ յատուկ տօնով կը յիշատակուի Հայ Եկեղեցւոյ մէջ՝ Առաջաւորաց պահոց Շաբաթ օրը: Իսկ Սարգիս իսկ հերձուածողը՝ հաւանօրէն Յովնանէս Մայրավանեցւոյ աշակերտն էր, որ թարգմանած էր Յովնանոս Հայկառնացւոյ գրութիւնները եւ հետեւող հանդիսացած երեսփոխական աղանդի³⁹:

Մատթէոս Ուռնայեցի բարձր գնահատանքով եւ գովասանքով կը խօսի Գագիկ Բագրատունիի գրական-աստուածաբանական հմտութեանն եւ շնորհներու մասին: Նա կը գրէ. «Եւ փառաւորեցաւ անունն Գագիկայ ընդ ամենայն վարդապետաց տանն Հայոց, որք երեւեցան յայնմ ժամանակին լուսաւորք»⁴⁰: Այն որ քարաքանդ մարդիկ մէջ խաբուէր էր Բիւզանդացիներէն եւ արքայական գահը կորսնցուցած, ոգի ի բռն ջանաց պաշտպանել Հայոց հոգեւոր-եկեղեցական անկախութիւնը: Եւ արդարեւ Դուկաս Կայսրը եւ Կայսերական ձեմարանի իմաստասէրները՝ չկամենալով նոր փիճաբանութիւններ եւ կոխներ ստեղծել՝ հաւանեցան Գագիկի գրոյն, որ Հայաստանեայց Եկեղեցւոյ հաւա-

տոյ խոստովանութեան անքիծ ու անաղարտ ցնեղը կ'ապացուցանէր, եւ արտօնութիւն շնորհեցին Հայոց՝ որպէսզի նոր կաթողիկոս մը ընտրեն: Յիրաւի խաչիկ Անեցիի (1058—1065) վախճանումէն ետք՝ Հռոմը արգելք կը հանդիսանային հայրապետական ընտրութեան: 1066 թուի Ապրիլ ամսուն, Հալէք յանձին Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամ-Գրիգոր Վկայաւերի (վխճ. 1105)՝ ընտրեցին մտաւորական հովուապետ մը եւ ապահովեցին Հայաստանեայց Եկեղեցւոյ անկախ ու ինքնիշխան գոյատեւումը: Բիւզանդացւոց պիշողական եւ մեղմ վերաբերմունքին հիմնական պատճառը քնականօրէն սելճուգ թիւրքերու արագ լառաշխաղացումն էր Կենտրոնական Ասիայէն՝ Պարսկաստանի եւ Անդրկովկասի միջոցաւ դէպի Փոքր Ասիա: 1071 թուի օգոստոս 26ին, երբ Ռումա-նոս Դ. Դիոգենէս պարտութիւն կրեց Մա-նսպէրտի ճակատամարտին՝ ընդդէմ Ալի Արսլանի եւ գերի ինկաւ թշնամիներուն ձեռքը, արդէն սկսած էր Կայսրութեան անկումը:

Գագիկ Արծրունի եւ Գագիկ Բագրատունի թագաւորներու հաւատոյ թուղթերուն միջեւ կարելի է որոշ կապակցութիւն մը նկատել: Վասպուրականի Սենեքերիմ-Յովհաննէս արքայի (968—1021) որդիներէն՝ Ատոմ եւ Արուսիկ 1065 թուին Սեբաստիայէն Բիւզանդական Արքունիք հրաւիրուած էին՝ որպէսզի հռոմէական աստուածաբաններու հետ միջեկեղեցական երկխոսութիւն մը կատարէին եւ Եկեղեցիներու ցանկալի միութիւնը իրականացնէին: Յակոբ Բարսիմեցւոյ մոլորութենէն ետք, Արծրունիք իրենք գաղտնաբար կանչեցին Բագրատունեաց ժառանգորդը՝ որ պատշաճ պատասխան մը տար Տուկիծ Կայսեր: Ըստ Ուռնայեցւոյ հաւաստիացման՝ Բիւզանդացիք գոհ մնացին Գագիկի հաւատոյ գիրէն «եւ յայնժամ արարին սէր եւ խաղաղութիւն ընդ որդւոց թագաւորացն Հայոց»¹¹: Թէպէտ հայ-բիւզանդական եկեղեցական եւ քաղաքական յարաբերութիւնները ժամանակաւորապէս կանոնաւորուեցան եւ սերտացան, բայց հիմնական ու ամբողջական միասնութիւն մը կարելի չեղաւ իրագործել: Վերջնական արդիւնքի ձախողութեան համար՝ ճիշդ պիտի չլլար այս կամ այն կողմը մեղադրել. Հայեր իրաւամբ պատրաստ չէին գտնելու իրենց Եկեղեցւոյ կենսական նշանակութիւն ունեցող ինքնիշխանութիւնը, իսկ Հռոմը չկարողացան ճշգրիտ կերպով ըմբռնել սելճուկներու ներխուժմամբ ստեղծուած կացութեան ծանրակշռութիւնը եւ շարունակեցին իրենց փոքրահոգի քաղաքականութիւնը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՔ

1. Մաղաքիա արքեպ. Օրմուշեան, Ազգապատմ., Ա. 4, Պոլիս, 1912, 1078—80:
2. Իրն ալ-Ասիր (Արաբական Աղբիւրներ, Բ) Լիւ-կատար Պատմութիւն, քաղգ. Արամ Տէր-Պետր-եան, Երևան, 1981, 179: Գուրգուսա եղբայր պիւտրական գործողութեանց մասին տես A. A. Vasiliev, Byzance et les Arabes, Tome II, Les relations politiques de Byzance et des Arabes à l'époque de la dynastie macédonienne 867—959 (253—348), première partie Bruxelles, 1968, 261—73.
3. Վ. Վարդանեան, Վասպուրականի Արծրունաց Թագաւորութիւնը (908—1021 թթ.), Երևան, 1969, 104—105:
4. Steven Runciman, The Emperor Romanus Le capenus and his Reign, Cambridge England, 1963, 137—38.
5. Հ. Միքայէ Վրդ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1784—86, Բ, 818—22:
6. V. Grumel, La Chronologie (Bibliothèque byzantine) Traité d'Études byzantines— I), Paris, 1958, 436: Hans-Georg Beck, Kirche und theologische Literatur im byzantinischen Reich, München, 1959/1977, 803, նշանակուած 923—928.
7. Գիրք Թորոց (ԳԹ), Թիֆլիս, 1901, 295:
8. ԳԹ, 295:
9. ԳԹ, 296:
10. ԳԹ, 297:
11. Գարեգին Վրդ. Զարբանապետ, Մատենադարան քարգմանութեանց Նախնեաց, Վենետիկ, 1889, 564, կը նշէ Մելիտոսի «Ի լուսնոյն ուրիշ աշակերտաց» ձայնը: Պատմութիւն մը կը զետեւենէր ի նպատակ Յնդեան եւ Մկրտումեան Յու-ռար 6ի տօնակատարութեան, «Ի թղթին Մե-լիտոսի Նախնեաց» որ առ ետք խախտելու ե-պիսկոպոսի» (Արքատ., 1896, Ա, 50), որ սա-կայն կարող է Մելիտոս Սարգեցւոյ (Բ, դար) հարապատ կամ անհարապատ գրութիւններէն լի-նել. Alfons Heilmann—Heinrich Kraft, Texte der Kirchenväter (5 Bände), Kösel-Verlag München, 5. Band (1966), 372—73.
12. Յովհաննէս Իմաստաւեր Օձնեցի, «Ընդդէմ Երե-ւոյթականաց», Մատենադարան, Վենետիկ, 1953, 68:
13. ԳԹ, 298. Սոկրատայ Պատմութիւն Եկեղեցական (անուանեալ Փոքր Սոկրատ) եւ Վարք Սրբոյն Սեդեարոսի, հրատ. Մալուպ Վրդ. Տէր Մով-սէսեան, Վաղարշապատ, 1897, 123—25, հոմոս, Սոկրատայ Արքատիկոսի Եկեղեցական Պատմու-թիւն, հրատ. Մ. Վրդ. Տէր Մովսէսեան, Վաղար-շապատ, 1897, 523—25:
14. ԳԹ, 298. Փոքր Սոկրատ, նոյն տեղ. հոմոս, Ստե-փանոս Միսնեցւոյ «Պատմական Թորոյն Ան-տիոքոս Եպիսկոպոսի», ԳԹ, 230, եւ Սահակ

- Չորսփորեցիի «Ընդդէմ Երկաթակացն Նեստորականաց» թուղթը, ԳԹ, 466:
15. ԳԹ, 300. հմմտ. նոյն անդ, 177 եւ 182:
 16. ԳԹ, 300:
 17. ԳԹ, 301. հմմտ. Թուղթ առ Եփեսացիս, Բ, 14—15:
 18. Ռանսիման, նոյն անդ, 138:
 19. Ռանսիման, նոյն անդ:
 20. Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցոյ, Երուսաղէմ, 1869, 194. Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, 162. Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, արեւելահայերէն թարգմանութիւն ի ձեռն Բարթիկեան Հրաչի, Երեւան, 1973, 106:
 21. Ուռհայեցի, Ժամանակագրութիւն (1898), 162:
 22. Հրաչեայ Աճառեան, Հայոց առնանունների բառարան, Երեւան, Գ, 484, Թ. 16:
 23. Ուռհայեցի, Պատմութիւն (Երուսաղէմ), 195—214. Ժամանակագրութիւն (Վաղարշապատ), 163—78. Ժամանակագրութիւն (արեւելահայերէն), 106—117. *Chronique de Matthieu d'Édesse*, traduit par M. Edouard Dulaurier, Paris, 1858, 135—50. *The Chronicle of Matthew of Edessa*, translated by Ara E. Dostourian, New Brunswick/New Jersey. 1972, 189—208; V. G umel, *Les registes des actes du Patriarcat de Constantinople*, vol. I, fasc. III, „Les registes de 1043 à 1206“, *Socli Assumptionistae Chalcedonenses*, 1936, 21, No 895.
 24. Ուռհայեցի, Ժամանակագրութիւն (Վաղարշապատ), 164. Դոստուրեան, 190:
 25. ԳԹ, 126, 300, 333, 491, 494:
 26. Նոյն անդ, 328:
 27. ԳԹ, 259, 305, 307, 308, 331, 333, 492, 493—94:
 28. ԳԹ, 119, 120:
 29. ԳԹ, 328, 419:
 30. ԳԹ, 300:
 31. Մաղաքիա արքեպս. Օրմանեան, Ազգապատում, Ա, 1270:
 32. Ժամանակագրութիւն (Վաղարշապատ), 166. Դոստուրեան, 194:
 33. Նոյն անդ, 167. հմմտ. Դոստուրեան, 194:
 34. Անդ, 168. հմմտ. Դոստուրեան, 195:
 35. Անդ, 172:
 36. Անդ, 174. Դոստուրեան, 202:
 37. Աճառեան, Հայոց առնանունների բառարան, Դ, 402—404, Թ. 1:
 38. Ներսէս Շնորհալի, Ընդհանրական թուղթ, Երուսաղէմ, 1871, 141—43:
 39. Աճառեան, նոյն անդ, 405, Թ. 12:
 40. Ժամանակագրութիւն (Վաղարշապատ), 179:
 41. Նոյն անդ, 178:

